# ԲՈՒԺԱՌՈՒՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԽՆԱՄՈՂՆԵՐԻ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ (PATIENT AND CAREGIVER ONCOLOGY QUALITY COUNCIL, POQC)

Միչիգանի ուռուցքաբանության որակի գծով կոնսորցիումը (Michigan Oncology Quality Consortium, MOQC) խումբ է, որը ձևավորվել է 2009 թվականին, որի նպատակն է բարելավել նահանգում քաղցկեղով հիվանդներին մատուցվող խնամքի որակը: MOQC-ին ստանում է աջակցություն Blue Cross Blue Shield of Michigan (BCBSM) կողմից, իսկ աշխատանքը համակարգվում է Միչիգանի համալսարանում (University of Michigan): MOQC-ն կենտրոնացած է քաղցկեղով բոլոր հիվանդների վրա, հատկապես նրանց, ովքեր ստանում են քիմիոթերապիա՝ ապահովագրությամբ կամ առանց դրա:

## ՆԱԽԱԴՐՅԱԼ

MOQC-ն ձևավորել է POQC-ն՝ բարձրացնելու հիվանդների, նրանց ընտանիքների կամ խնամակալների դերը մեր Կոնսորցիումի աշխատանքում: POQC-ի անդամներն աջակցում են մեր Ղեկավար կոմիտեին և մեր աշխատանքին՝ ղեկավարելով նոր նախագծերի մշակումը և կիսելով մեր աշխատանքը համայնքի և այլ շահագրգիռ խմբերի հետ: Մենք շահագրգռված ենք ունենալ բուժառուներ և խնամակալներ, որոնք ներկայացնում են փոքրամասնությունների խմբերը, նրանք, ովքեր թերի բժշկական օգնություն են ստացել, և նրանք, ովքեր ունեն կամ բախվել են առողջապահական համակարգ մուտք գործելու դժվարություններին:

## ԼԱՎ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ԲՈՒԺԱՌՈՒԻ ԿԱՄ ԽՆԱՄԱԿԱԼԻ ՀԱՄԱՐ

- Ունի քաղցկեղի հետ կապված անձնական փորձ որպես բուժառու կամ
- Պատրաստ է կիսվելու իր փորձով կամ տեսակետով
- Կարող է խոսել և գործել որպես թիմի մաս անվտանգ խմբային միջավայրում
- Արդյունավետ աշխատում է տարբեր անամնեզ ունեցող մարդկանց հետ
- Ունի հասանելիություն համակարգչին և ինտերնետին (Google Chrome բրաուզերով)
- Օգտագործում է էլ. փոստը փաստաթղթեր ստանալու, հաղորդագրություններ ուղարկելու համար և հաստատում է տեղեկատվության առկայությունը և ստացումը
- Հասկանում և կարողանում է օգտագործել Microsoft-ի հիմնական ծրագրերը փաստաթղթերի որոշ խմբագրումների համար

## Ի՞ՆՉ ԱԿՆԿԱԼԵԼ ՈՐՊԵՍ POQC ԱՆԴԱՄ

- Ամսական 1-ից 4 ժամ ժամանակի տրամադրում MOQC-ի հետ կապված հեռավար աշխատանքներին, օրինակ՝
  - Վեբկայքի բովանդակության կամ փաստաթղթերի վերանայում և հետադարձ կապի տրամադրում
  - 1-ից 3, 1 ժամ տևողությամբ վիրտուալ հանդիպումներին մասնակցություն Zoom-ի միջոցով (պահանջվում է իրականացնել նվազագույն նախապատրաստական աշխատանքներ)
  - Մտքերի և հետադարձ կապի տրամադրում MOQC-ին կամ հատուկ թեմաների ուղղությամբ աշխատանքների իրականացում
- Մասնակցություն աշխատանքային խմբերի՝ կենտրոնացած POQC-ի կողմից ինքնորոշված թեմաների շուրջ բարելավմանն ուղղված աշխատանքներին
- Կապ հաստատել MOQC համակարգող կենտրոնի (MOQC Coordinating Center) հետ, եթե չի ստացվում ավարտել կամ կատարել որևէ պայմանավորվածություն

Բուժառուների և խնամակալների ուռուցքաբանության որակի խորհրդի անդամները փոխհատուցվում են ծախսված անձնական և վիրտուալ հանդիպումների ժամանակի և անձնական հանդիպումների համար օգտագործված ճանապարհածախսի համար:

**ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ**
Vanessa Aron, ծրագրի ղեկավար
varon@moqc.org • 734-615-1796

MOQC
MICHIGAN ONCOLOGY QUALITY CONSORTIUM

Blue Cross Blue Shield of Michigan
Nonprofit corporations and independent licensees of the Blue Cross and Blue Shield Association